

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ  
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**

**N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՊՁԲ-19/29-1**

ք. Երևան

«15» «11» 2019թ.

ՀՀ Արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայությունը, գործելով Հայաստանի Հանրապետության անունից, ի դեմս ծառայության գլխավոր քարտուղարի պաշտոնակատար՝ Արտակ Ղազարյանի, որը գործում է ծառայության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Գնորդ», մի կողմից, և, «Էքսպոզա» ՍՊ ընկերությունը, ի դեմս տնօրեն՝ Տ. Աֆրիկյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**2.1 Գնորդն իրավունք ունի՝**

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատուց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատուց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում:

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի,

2.1.8 Ձևնել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

## **2.2 Գնորդը պարտավոր է՝**

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

## **2.3 Վաճառողն իրավունք ունի՝**

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

## **2.4 Վաճառողը պարտավոր է՝**

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

### 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 66900000 (վաթսուվեց միլիոն ինը հարյուր հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսերին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

### 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

### 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական ընդթագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասներորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում << օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը << ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով.

1) Վաճառողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Վաճառողը գրավոր տեղեկացնում է Գնորդին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

8.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը և հավելվածները կազմված են 19 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում և Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:

### 9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

#### ԳՆՈՐԴ

ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայություն  
ք. Երևան, Արշակունյաց-63

ՖՆ աշխատակազմի գործառնական  
վարչություն

Հ/Կ 900011029148

ՀՎՀՀ 02204739

ՔԿ ծառայություն  
Ա. Ղազարյան



#### ՎԱՃԱՌՈՂ

ՀԷՔՍԱԴԱ ՍՊԸ

ք. Երևան, Նարեկացի 54, բն 66

Ամերիաբանկ ՓԲԸ

Հ/Կ 1570025927540100

ՀՎՀՀ 00871497

Տնօրեն՝ Տիգրան Աֆրիկյան



ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆԱՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՅՈՒՅՑ

հրավեր ով նախա տեսվա ծ չափաք աժնի համար	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը և սպորանքային նշանը	արտադրողը և ծագման երկիրը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը /ՀՀ դրամ/	ընդհանուր գինը /ՀՀ դրամ/	ընդհանուր քանակը	մատակարարման		
									հասցեն	ենթակա քանակը	ժամկետը
1	32421700/2	Ցանցային համակարգ (ակտիվ գոտի)		Համաձայն հավելված 1-ի:	հատ	66900000	669000000	1	ՀՀ ԱՆ բոլոր ՔԿ հիմնարկներ և կենտրոնական մարմին	1	2019թ. 4-րդ եռամսյակ մինչև 25.12.2019թ.

Հավելված 1

**Ցանցային համակարգի ակտիվ գոտին բաղկացած է հետևյալ սարքավորումներից՝**

**Համակարգիչ՝ 65 հատ**

Մայրական սալիկ (motherboard) անվազն B360 Chipset կամ համարժեք:

Պրոցեսոր (processor)՝ անվազն Intel i5, անվազն 8-րդ սերնդի և անվազն 4 միջուկ, հիշողությունը՝ անվազն 9MB SmartCache:

Օպերատիվ հիշողություն (RAM)՝ անվազն 8GB (4GBx2 or 8GBx1), անվազն 2400MHz DDR4 Non-ECC SDRAM:

Կարծր մարմնային կուտակիչ (SSD)՝ անվազն 256GB, M.2 PCIe SSD

Վիդեո քարտ (video card)՝ մայրական սալիկում ինտեգրված, անվազն HD Graphics 630 կամ համարժեքը:

Համակարգչային ցանցային միացումներ՝ 1 x Gigabit Ethernet Controller RJ-45, 802.11bgn, BT4.0 կամ համարժեք:

Արտաքին միացումների հնարավորություններ՝ Front IO ports: 2x USB 3.1 Gen 1 Type-A, Universal audio jack, 5:1 Media card reader, Rear IO ports: 4x USB 2.0, Gigabit Ethernet, HDMI, VGA, 3-stack audio jacks supporting 5.1 surround sound, կամ համարժեք:

Ձայնային սարքավորումներ՝ ինտեգրված ձայնային քարտ:

Իրան (Case)՝ Tower: Հոսանքի սնուցման սարք (Power supply unit)՝ պետք է լինի անվազն 280W, հովացուցիչ (cooler) (APFC – Full range or EPA Bronze – Full range) կամ համարժեք:

Հոսանքի Լարդ-Եվրոպական կամ համարժեք:

Գծային լարում՝ 100–240 VAC, 50–60Hz

Չափսեր՝ (WxHxD) 160mm (6.3”) x 373.7mm (14.7”) x 289.4mm (11.4”), թույլատրելի շեղում՝ 5 %

Քաշ՝ Starting Weight: 5.27kg (11.6 lbs), թույլատրելի շեղում՝ 5 %

### **Մոնիտոր (Monitor 22 inch)՝ 65 հատ**

Օգտագործվող հատվածի անկյունագծի չափեր առնվազն 21.5” դյույմ, կետայնությունը՝ առնվազն 1920x1080 Full HD clarity,

Հաճախականությունը՝ առնվազն 60Հց,

լայնաէկրան՝ 16:9 հարաբերակցությամբ, (դիտարկման անկյունները առնվազն 90° հորիզոնական և 65° ուղղահայաց, հակադրությունը 600:1, (դինամիկ) պայծառությունը առնվազն 200 կ/դ, արձագանքը առնվազն 5մկ, միացման միջերեսը VGA կամ համարժեքը:

Ստեղնաշար համակարգչային (Keyboard)՝ գործարանային անգլերեն և ռուսերեն տառատեսակներով, ստեղնաշար համատեղելի MS Windows համակարգերի հետ: Մկնիկ համակարգչային (Mouse)՝ օպտիկական, լարային: Կոճակների քանակը՝ առնվազն 3, ներառյալ անիվի կոճակը:

### **Անխափան սնուցման սարք՝ 65 հատ**

Տեսակը՝ Line interactive

Մուտքային՝

Վոլտաժ՝ Required AC 160~280V

Ֆազերի քանակը՝ Single phase +G

Հաճախականությունը՝ 50Hz ± 5%

Ելքային՝

Վոլտաժ՝ AC 220V ± 10% (mains)

Հզորությունը՝ 850VA (510W)

Հաճախականությունը՝ 50Hz ± 1%

Crest factor 3:1

Անցման ժամանակը՝ ≤ 10ms

Սովտեներ՝ 2 x Universal (Multi-type)

Մարտկոց՝ Backup 20 minutes

Լիցքավորում՝ 90% հզորությունը 8 ժամկա ընթացքում

Հզորության գործակիցը PF = 0.6 (երբ մուտքային տիրույթը -35% -23%, PF = 0.45)

Transformer E Type

Աղմուկի մակարդակը է 45dB (1 meter)

Աշխատանքային միջավայր՝ 0 –ից –40C  
խոնավությունը՝ 20 ~ 90% (ոչ կոնդենսացված)  
Չափսեր՝ 280x100x140 մմ, թույլատրելի շեղում 5%:

#### **Տալիչ /պատճենահանող/ բազմաֆունկցիոնալ սարք A4՝ 14 հատ**

Լազերային, սև-սպիտակ տպագրություն, սկանավորում և պատճենահանում:

Տպագրման և/կամ պատճենահանման արագությունը ոչ պակաս քան 35 էջ/րոպեում, duplex ռեժիմում ոչ պակաս 31 էջ/րոպե, ընդ որում առաջին էջի տպագրման արագությունը առավելագույնը առավելագույնը աշխատանքային ռեժիմում 6.3վ-ում, քնած ռեժիմից արժանալու դեպքում՝ 8.8 վ-ում: Երկկողմանի ավտոմատ տպագրության հնարավորություն՝ Automatic Duplex printing: Պրոցեսորը՝ նվազագույնը 1,2GHz: Հիշողության նվազագույն ծավալը 256MB: Թղթի ձևաչափը՝ A4: Թղթերի ստանդարտ դարակների ընդհանուր տարողությունը՝ ոչ պակաս 350 թերթ, և անհրաժեշտության դեպքում և նվազագույնը 550 թերթանոց դարակի ավելացման հնարավորություն: Տպագրության որակը՝ ոչ պակաս 1200 x 1200 dpi: Թղթի քաշը Tray 1: 60 to 175 g/m<sup>2</sup>; Tray 2 60 to 120 g/m<sup>2</sup>, optional 550 թերթանոց tray : 60 to 120 g/m<sup>2</sup>, ADF: 60 to 90 g/m<sup>2</sup>: Համակարգչային ցանցին միացում՝ ներկառուցված Ethernet 10/100/1000T-ի միջոցով: Սկաների արագությունը նորմալ ռեժիմ՝ ոչ պակաս 29 էջ/ր (կամ 47 պատկեր/ր), Duplex ռեժիմում կամ 46 պատկեր/ր, թղթի չափը ADF-ից՝ առավելագույնը՝ 216 x 297մմ, նվազագույնը՝ 102 x 152մմ, ADF-ից 1 անցումով երկկողմանի ավտոմատ սկանավորում՝ duplex ADF, նվազագույնը 50 թերթի տարողությամբ: Postscript level 3 emulation, direct PDF (v 1.7) printing կամ համարժեք տպագրման լեզուների պարտադիր առկայություն: Անհրաժեշտ բոլոր մալուխները պետք է ներառված լինեն կոմպլեկտի մեջ: Օրիգինալ քարթիջը պարտադիր ներառված պետք է լինի գործարանային կոմպլեկտի մեջ, նվազագույնը 3000 էջի տպագրման հնարավորությամբ: Անսական տպագրման հնարավորությունը մինչև 80000 թերթ: Էկրան 6.9սմ գունավոր touchscreen: Ֆիզիկական պարանտրերը՝ ստանդարտ կոմպլեկտացիայով ոչ պակաս 420սմ x 390սմ x 320սմ; հավելյալ դարակներով ոչ պակաս 430սմ x 630սմ x 320սմ; թույլատրելի շեղում 5%: Ցանցային պրոտոկոլները՝ TCP/IP, IPv4, IPv6; Print: TCP-IP port 9100 Direct Mode, LPD (raw queue support only), Web Services Printing, Apple AirPrint™, Google Cloud Print 2.0, Mopria, IPP Print; Discovery: SLP, Bonjour, Web Services Discovery; IP Config: IPv4 (BootP, DHCP, AutoIP, Manual), IPv6 (Stateless Link-Local and via Router, Statefull via DHCPv6), SSL Security and Certificate management; Management: SNMPv1, SNMPv2, SNMPv3, HTTP/HTTPS, Syslog, FTP FW Download

#### **Ֆոտո կոպի 14 հատ**

Տիպը՝ կոմպակտ

Համակարգչին միանալու և տվյալներ փոխանակելու հնարավորությամբ

Մատրիցա՝ առնվազն 20Մպ

Օպտիկական զույգ՝ առնվազն 25 անգամ

#### **Սմարթ քարտ ընթերցող սարք՝ 130 հատ**

Պրոտոկոլների աջակցություն ISO 7816, T=0 կամ T=1 արձանագրությունների, հիմնված պրոցեսորային սմարթ քարտերի վրա:

Համապատասխանի PC / SC 1.0 / 2.0 տարբերակի ստանդարտին եւ պաշտոնապես հաստատված լինի Microsoft-ի կողմից:

Աջակցվող քարտի տեսակները՝ 5V, 3V եւ 1.8 V, ISO 7816 դասի A, B եւ C սմարթ քարտեր:

### **Մատնահետք կարդացող սարք՝ 14 հատ**

Նախատեսված է մատնահետքերը վերցնելու և տվյալների շտեմարան մուտքագրելու համար: Օգտագործում է օպտիկական և պատկերների նախամշակման առաջադեմ տեխնոլոգիաներ: Սարքն ապահովում է հստակ պատկերներ և վերամշակման սեփական արագություն: Համատեղելի նշված ցանցի սարքավորումների հետ:

### **Օդորակիչ՝ 2 հատ**

Օդորակիչ նախատեսված համակատարարի չափի սերվերային սենյակի հովացման համար: Օդորակիչը սենյակում պետք է ապահովի սերվերների անխափան աշխատանքի համար անհրաժեշտ ջերմաստիճան:

### **Սերվերային համակարգ՝ 1 կոմպլեկտ**

#### **Սերվերային սենյակի կահավորում**

Սերվերային սենյակի նորոգում և կահավորում, համապատասխան

ավտոմատ բաշխիչ համակարգով, հակահրդեհային համակարգով և այլ անհրաժեշտ սարքավորումներով կահավորելու

անհրաժեշտություն (օրինակ՝ կեղծ հատակ, սերվերային սենյակին համապատասխան դուռ և այլն):

Համապատասխան ծրագրային ապահովման CD սկավառակ (ներ) և փաստաթղթեր, էլեկտրական հոսանքին և սարքերը իրար միացնող համապատասխան լարեր:

Վերը նշված տեխնիկական բնութագրերով սարքերի բոլոր բաղադրատարրերը պետք է լինեն նոր, և գործարանային արտադրության:

Լրացուցիչ պայմաններ՝

համակարգիչը, ստեղծաշարն ու մկնիկը պետք է լինեն նոր, կոմպլեկտավորումը և փաթեթավորումը գործարանային և արտադրված նույն արտադրողի կողմից: Երաշխիքային ժամկետն առնվազն 1 տարի:

Երաշխիքային սպասարկման ապահովում նույն արտադրողի պաշտոնական սպասարկման կենտրոնում:

Բեռնաբարձումը, առաքումը, տեղափոխումը (պահանջված հասցեով) և բեռնաթափումը կատարվում է Մատակարարի միջոցների հաշվին:

### **Սերվեր՝ 2 հատ**

- Շասի 1U սերվեր՝ 19" սերվերային պահարանում տեղադրվող, պահարանում սերվերը տեղակայելու ամրակներով
- Պրոցեսոր CPU-երի քանակը - 1, սակայն մինչև 2 հատ տեղադրելու: հնարավորությամբ, պրոցեսորի միջուկների քանակը - 12, հաճախականությունը առնվազն 2.2 Ghz: CPU-ն պետք է աշխատի վաճառողի կողմից նշանակված հաճախականությամբ
- CPU L3 CACHE Memory առնվազն 19.25UF L3 cach
- Մայր սալիկը Intel® C621
- Օպերատիվ հիշողությունը -24 DIMM սլոտերով
- 64 GB տեղադրված օպերատիվ հիշողությամբ, սակայն մինչև 768ԳԲ աճելու հնարավորությամբ՝ օգտագործելով RDIMM մոդուլներ, կամ մինչև 1.5ՏԲ՝ օգտագործելով LRDIMM մոդուլներ:

- Հիշողության պաշտպանման մեխանիզմներ Պետք է ունենա "Advanced ECC with multi-bit error protection", "online spare", "mirrored memory", "fast fault tolerance" տեխնոլոգիաների աջակցություն
- Կրիչներ 32GB միկրո SD քարտ
- RAID կոնտրոլլեր Սերվերը պետք է ունենա ներկառուցված SATA ծրագրային RAID կոնտրոլլեր
- Ցանցային քարտ Պետք է ունենա 4 հատ 1Gb Ethernet պորտեր, պետք է ունենա 16Գբ Երկպորտակի Fibre Channel(FC) քարտ՝ առաջարկվող տվյալների պահպանման համակարգի հետ համատեղելի, պետք է նաև ներառի տվյալների պահպանման համակարգին միանալու համար անհրաժեշտ մալուխները:
- Այլ ինտերֆեյսներ "Micro SD slot – 1, USB 3.0 - մինչև 5" PCIe սլոտեր
- Մինչև երեք հատ PCIe 3.0 սլոտերի աջակցություն, որոնցից ամսվազն երկու հատը x16
- Սնուցման բլոկեր
- Երկու հատ 800W hot-plug սնուցման բլոկերով
- Ստանդարտներ "ACPI 6.1 Compliant
- PCIe 3.0 Compliant
- PXE Support
- WOL Support
- Microsoft® Logo certifications
- USB 3.0 Support
- USB 2.0 Support
- Energy Star
- ASHRAE A3/A4
- UEFI (Unified Extensible Firmware Interface Forum)
- SMBIOS
- Redfish API
- IPMI 2.0
- SNMP v3
- TLS 1.2
- DMTF Systems Management Architecture
- Active Directory v1.0"
- Անվտանգություն "UEFI Secure Boot and Secure Start support
- Security feature to ensure servers do not execute compromised firmware code
- FIPS 140-2 validation
- Common Criteria certification
- UEFI
- TPM 1.2
- TPM 2.0"
- Աջակցվող օպերացիոն համակարգերը "Microsoft Windows Server

Red Hat Enterprise Linux (RHEL)  
SUSE Linux Enterprise Server (SLES)

VMware

ClearOS"

- Ղեկավարում Առանձնացված ղեկավարման 1GbE պորտ՝ հեռակա ղեկավարման հնարավորությամբ, բրաուզերի վրա հիմնական ղեկավարման գրաֆիկական remote console, որը կապահովի սերվերի բեռնումը՝ օգտագործելով USB/CD/DVD, կունենա սերվերի հոսանքի անջատման/միացման վիրտուալ կոնսոլ:
- Նշված ֆունկցիոնալը ապահովելու համար անհրաժեշտ բոլոր արտոնագրերը պետք է լինեն ներառված տեխ. աջակցություն "Բոլոր սարքավորումները պետք է լինեն մեկ արտադրողից և ինտեգրացված լինեն որպես մեկ միասնական ծրագրա-ապարատային համալիր համակարգ: Համակարգը պետք է միանա S700 էջում նշված համակարգին և արտաքին կոմուտատոր էջում նկարագրված սարքերին
- Համակարգը պետք է ներառի միացումները իրականացնելու համար անհրաժեշտ բոլոր մալուխները և փոխարկիչները:
- Համակարգի տեղադրումը և գործարկումը պետք է իրականացվի արտադրողի սերտիֆիկացված մասնագետների կողմից:

### **Տվյալների պահպանման համակարգ՝ 1 հատ**

Տվյալների պահպանման համակարգը (այսուհետև S700) պետք է ունենա՝

- երկու կոնտրոլեր, որոնք կաշխատեն "active - active" ռեժիմում և որոնցից յուրաքանչյուրը կունենա առնվազն 8GB քեշ:
- Առաջարկվող S700-ն պետք է ունենա SSD/Flash քեշ-ի աջակցություն: Համակարգը պետք է աջակցի առնվազն 8SF ծավալի Flash քեշ:
- Առաջարկվող S700-ի յուրաքանչյուր կոնտրոլերի պետք է աջակցի առնվազն մեկ 8Gbps FC և մեկ 10Gbps iSCSI պորտեր:
- Առաջարկվող S700-ն պետք է ապահովի բոլոր վերը նշված պորտերի աշխատանքը որպես FC կամ iSCSI՝ տեղադրելով համապատասխան SFP: Պետք է ներառի միացման համար անհրաժեշտ տրանսիվերներ:
- S700-ն հոսանքի կորստի դեպքում պետք է հասցնի ապահովել քեշ մոդուլում պարունակվող տվյալների պահպանումը՝ օգտագործելով ներքին մարտկոց(battery) կամ կուտակիչ(capacitor):
- Պետք է ապահովի դիսկերի «hot plug» ընդլայնում, ինչպես նաև դիսկերի, կոնտրոլերների, հոսանքի սնուցման բլոկերի ու հովացման բլոկերի «hot» փոխարինում:
- Առաջարկվող S700 պետք է ունենա RAID 1, Raid 1+0, Raid 5 և Raid 6 աջակցություն:
- Բոլոր raid-երի և Flash քեշի հետ պետք է աջակցվի նաև "Thin Provisioning":
- Առաջարկվող S700-ն պետք է ապահովի առնվազն 512 հատ LUN-ի աջակցություն: Պետք է ապահովի առնվազն 140TB չափ ունեցող LUN-երի աջակցություն:
- S700-ն պետք է աջակցի 2.4TB ծավալով 10K Enterprise SAS սկավառակներ, 3.2TB ծավալով SSD և 12TB NL SAS 7.2K սկավառակներ: Բացի Flash քեշի համար նախատեսված 2x800GB SSD-ներից, համակարգը պետք է ներառի 4x4TB SAS 7.2K դիսկեր
- Առաջարկվող S700-ն պետք է ունենա self-encrypted SAS և NL SAS դիսկերի աջակցություն:
- S700-ն պետք է աջակցի առնվազն 96 հատ SFF տիպի սկավառակների կամ SSD-ների միացում:

- SՊՀ-ն պետք է աջակցի վիրտուալիզացիայի տեխնոլոգիա, որը հնարավորություն կտա volum-ների տվյալները տեղաբաշխել մեկ դիսկային փուլի շրջանակում նույն տեսակի բոլոր սկավառակների միջև: Դիսկային փուլը պետք է աջակցի բոլոր վերը նշված raid-երը:
- SՊՀ-ն պետք է աջակցի «Sub Lun Tiering» տեխնոլոգիա, որը հնարավորություն կտա տվյալները ռեալ ժամանակում տեղաբաշխել մեկ դիսկային փուլի տարբեր տեսակի դիսկերի միջև(SSD, SAS, NL SAS):
- SՊՀ-ն պետք է ունենա ներկառուցված արտադրողականության ղեկավարման համակարգ: Ղեկավարման վահանակը պետք է կառուցված ցուցադրել համակարգի ընդհանուր IOPS և MB/sec արտադրողականությունը:
- Պետք է ունենա “controller based Snapshot և clone” տեխնոլոգիաների աջակցություն: Պետք է ապահովի արժեքներ 512 հատ snapshot ստեղծելու հնարավորություն (եթե տվյալ ֆունկցիոնալը ապահովելու համար անհրաժեշտ է լրացուցիչ լիցենզիա, ապա այն պետք է լինի ներառված):
- SՊՀ-ն պետք է թույլ տա Global Spare դիսկ կամ RAID խմբին կցված spare դիսկ կոնֆիգուրացնելու հնարավորություն
- Պետք է ունենալ ռեպլիկացիայի աջակցություն: Պետք է ունենա հնարավորություն ռեպլիկացնել նույն ընտանիքի մի քանի SՊՀ-ներին միջև՝ արժեքներ 1:4 ռեժիմում (եթե տվյալ ֆունկցիոնալը ապահովելու համար անհրաժեշտ է լրացուցիչ լիցենզիա, ապա այն պետք է լինի ներառված):
- Պետք է աջակցի Windows server 2012 / 2016, RHEL, SUSE, VMware, HPE-UX օպերացիոն համակարգերը
- Համակարգերի տեղադրումը և գործարկումը պետք է իրականացվի արտադրողի սերտիֆիկացված մասնագետների կողմից: Համակարգը պետք է ներառի առաջին էջում բերված սերվերներին միանալու համար անհրաժեշտ մալուխները:
- Բոլոր սարքավորումները պետք է լինեն մեկ արտադրողից և ինտեգրացված լինեն որպես մեկ միասնական ծրագրա-ապարատային համալիր համակարգ: Համակարգը պետք է ներառի միացումները իրականացնելու համար անհրաժեշտ բոլոր մալուխները և փոխարկիչները: Համակարգի տեղադրումը և գործարկումը պետք է իրականացվի արտադրողի սերտիֆիկացված մասնագետների կողմից:

### **Ցանցային կոմուտատոր (սվիչ)՝ 2 հատ**

Ղեկավարվող Layer 2 սվիչ հետևյալ պարամետրերով՝

- 24 հատ RJ-45 10/100/1000 պորտերով
- 2 հատ SFP 100/1000 Mbps պորտերով
- Պրոցեսորը՝ ARM Cortex-A9 @ 400 MHz
- հիշողությունը՝ 256MB SDRAM, 64ՄԲ ֆլեշ
- փաթեթների բուֆերի չափը՝ 1.5 ՄԲ
- Ղեկավարումը WEB-ի միջոցով HTTP, HTTPS արտոկոլների միջոցով
- 1000 Մբ-ի դեպքում հապաղումները՝ < 2  $\mu$ s (LIFO 64-բայթ փաթեթներ)
- Switching թողունակությունը՝ 52Gbps
- MAC հասցեների քանակը՝ 8000

- Հուսալիությունը MTBF (տարիներ)՝ 80 աշխատանքային ջերմաստիճանը՝ 0°C-ից 40°C
- մուտքային լարումը՝ 200-240 VAC
- հոսանքի առավելագույն սպառումը՝ 22W
- աջակցվող տեխնոլոգիաները և արձանագրությունները՝ 802.1Q, - Jumbo Frame (մինչև 9220 բայթ), SNMP v1, v2c, Port mirroring, NTP, Traffic Prioritization, Broadcast Control, 802.1p, 802.1Q, Auto-MD/MDIX, 802.3x, 802.3az, IGMP snooping, 802.1D, 802.1W, LACP, պահարանում տեղակայվող
- Բոլոր սարքավորումները պետք է լինեն մեկ արտադրողից:

#### **Սերվերային պահարան՝ 1 հատ**

- 42U, առնվազն 200.6(F) x 128(H) x 59.7(L) սմ չափսերով, ստացիոնար վիճակում 1360 կգ ծանրություն բեռներու հնարավորությամբ, դիմային և հետևի դռներով, կողային պանելներով, որոնք ունեն ընդհանուր բանալիով փական, հողանցման կոմպլեկտով:
- Պետք է ապահովի նշված սարքավորումների տեղադրումը, պետք է համապատասխանի EIA Type A ստանդարտի 4.1.1 սեկցիայի պահանջներին, UL/CES, WEEE, RoHS պահանջներին, բոլոր բաց սլոտերը, որոնցում սարքավորումներ տեղադրված չեն դիմացի կողմից պետք է փակ լինեն:

#### **Հոսանքի բաժանման սարք (PDU)՝ 2 հատ**

- Պետք է ներառի երկու հատ ուղղահայաց PDU, որոնցից յուրաքանչյուրը կունենա առնվազն 10 հատ C13 և 2 հատ C19 տիպի վարդակներ:

#### **Անխափան սնուցման սարք՝ 2 հատ**

- առավելագույնը 3U բարձրությամբ
- առնվազն 3000ՎԱ/2700Վտ կգուրությամբ
- մուտքային լարման դիսպազոնը 160-253V՝ 200/208V նոմինալ լարման դեպքում; 176-253V՝ 220, 230, և 240V նոմինալ լարման դեպքում, մուտքային հաճախականությունը 50/60 Hz ելքային լարման օձլայն կարգավորումը նոմինալ լարումից առնվազն -10% +6% միջակայքում
- մինչև 4 հատ լրացուցիչ մարտկոցային մոդուլի միացման հնարավորություն, սակայն առանց դրանց մինչև 9 բուպե պահուստային հոսանք դրամարդելու հնարավորություն(50% ծանաբեռնվածության դեպքում)
- հնարավոր ծավալի մինչև 80%-ի լիցքավորումը առավելագույնը 3 ժամում
- աշխատանքային ջերմաստիճանը՝ 10° to 40° C
- մուտքային միացումը՝ IEC C-20,
- ելքային միացումները՝ 8 հատ IEC320 C13 (10A)

- Ցանցային մոդուլով (որը ներառում է մեկ Ethernet պորտ և մեկ serial պորտ) և LCD էկրանով:  
**Հավելյալ պահանջ՝**

Սերվերային համալիր համակարգի ինչպես նաև համակարգչային տեխնիկայի սարքավորումների համար պետք է տրամադրվի արտադրողի ավտորիզացիոն նամակ (MAF):

Սերվերային համալիր համակարգում ներառված բոլոր սարքավորումների վրա պետք է տրամադրվի արտադրողի կողմից 3 տարվա տեխ. աջակցում՝ 24x7 ռեժիմում սերվիս-դեպք գրանցելու հնարավորությամբ, 4 ժամվա արձագանքման մաքսիմալ

ժամանակահատվածով: ՀՀ տարածքում երկու արտոնագրված սերվիս կենտրոնների առկայությունը պարտադիր է, դրանց տվյալները պետք է նշված լինեն արտադրողի վեբ-կայքում:

**ՔԿՀ-ների և կենտրոնական մարմնի հասցեներն են՝**

1. Արմավիր ՔԿՀ - ք. Էջմիածին, Չոբանջարա խճ. 23
2. Նուբարաշեն ՔԿՀ - ք.Երևան, Նուբարաշենի խճ. 2
3. Դատ. հիվանդանոց ՔԿՀ - ք.Երևան Արշակունյաց 2
4. Վարդաշեն ՔԿՀ - ք.Երևան, Նուբարաշենի խճ. 7
5. Երևան-Կենտրոն ՔԿՀ - ք.Երևան, Նալբանդյան 104
6. Աբովյան ՔԿՀ - ք. Աբովյան 2-րդ արդ. թաղ, թիվ 30/1
7. Հրազդան ՔԿՀ - ք. Հրազդան, Մ/շրջան 45
8. Սևան ՔԿՀ - ք. Հրազդան
9. Կոշ ՔԿՀ - Արագածոտնի մարզ, գ. Կոշ
10. Արթիկ ՔԿՀ - Շիրակի մ., Հաղիճ համայնք
11. Վանանձոր ՔԿՀ - ք. Վանանձոր, Տավրոսի 20
12. Գորիս ՔԿՀ - ք. Գորիս, Նարեկացու 5
13. ՔԿԾ կենտրոնական մարմին - ք.Երևան, Արշակունյաց-63:

Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

**ԳՆՈՐԴ**

ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայություն  
ք. Երևան, Արշակունյաց-63  
ՖՆ աշխատակազմի գործառնական  
վարչություն



Հ/Հ 90001029148  
Հ/Հ ՀՀ 02204739

ՔԿ ծառայություն  
Ա. Ղազարյան

**ՎԱՃԱՌՈՂ**

ՀԷՔՍԱԴԱ ՍՊԸ  
ք. Երևան, Նարեկացի 54, բն 66  
Ամերիաբանկ ՓԲԸ  
Հ/Հ 1570025927540100  
Հ/Հ ՀՀ 00871497



Suren Shikhan Աֆրիկյան  
/ստորագրություն/ Ն.Տ

Հավելված N 2  
 «15» «11» 2019թ. կերված  
 ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՊՁԲ-19/29-1 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ\*

		Ապրանքի				ՀՀ դրամ	
		դրնաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին՝ ըստ եռամսյակների. այդ թվում					
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	1-ին եռամսյակ	2-րդ եռամսյակ	3-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ	ընդամենը
1	32421700/2	Ցանցային համակարգ (ակտիվ գուտի)	-	-	-	66900000	66900000

\* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են անողական կարգով:

ԳՆՈՐԴ

ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայություն  
 ք. Երևան, Արշակունյաց-63  
 ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն  
 Հ/Հ 900011029148  
 ՀՎՀՀ 02204739

ՔԿ ծառայություն  
 Ա. Նազարյան



ՎԱՃԱՌՈՂ

ՀԷՔՍԱՂԱ ՍՊՈՂ  
 ք. Երևան, Նարեկացի 54, բն 66  
 Ամերիաբանկ ՓԲԸ  
 Հ/Հ 1570025927540100  
 ՀՎՀՀ 00871497

Տնօրեն՝ Տիգրան Աբրիկյան



Պայմանագրի կողմ  
 \_\_\_\_\_  
 \_\_\_\_\_  
 գտնվելու վայրը \_\_\_\_\_  
 հի \_\_\_\_\_  
 \_\_\_\_\_  
 հվհի \_\_\_\_\_

Պատվիրատու  
 ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայություն  
 ք. Երևան, Արշակունյաց-63  
 ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն  
 Հ/Հ 900011175016  
 ՀՎՀՀ 02204739

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N  
 ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ  
 ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

«    » «    » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «    » «    » 20 թ.

Պայմանագրի համարը՝ \_\_\_\_\_

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «    » «    » 20 թ. դուրս գրված N \_\_\_\_\_ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	Մատակարարված ապրանքների				Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը			
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց  
 \_\_\_\_\_  
 ստորագրություն  
 \_\_\_\_\_  
 ազգանուն, անուն  
 Կ.Տ.

Ապրանքը ընդունեց  
 \_\_\_\_\_  
 ստորագրություն  
 \_\_\_\_\_  
 ազգանուն, անուն  
 Կ.Տ.

ԱԿՏ N \_\_\_\_\_  
 պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ **Պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պետական գնման պայմանագիր**

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « \_\_\_\_ » « \_\_\_\_\_ » 2019 թ.

Պայմանագրի համարը՝ ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՊՁԲ-19/29-1

Պատվիրատուն և Կատարողը հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ

« \_\_\_\_ » « \_\_\_\_\_ » 2019թ. դուրս գրված N° \_\_\_\_\_ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Կատարողը մատուցել է հետևյալ ապրանքները՝

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

**ԿՈՂՄԵՐԸ**

**Հանձնեց**

**Ընդունեց**

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

\_\_\_\_\_

ազգանուն, անուն

\_\_\_\_\_

ստորագրություն

\_\_\_\_\_

ազգանուն, անուն

\_\_\_\_\_

ստորագրություն